

Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը Հոգեվարքի Մէջ

ՀԻՄԻ՞ ԷԼ ԼՌԵՆՔ....

Սէսիլ Բէշիշեանի «Ա՛լ Կը Բաւէ - Յեխարձակումները Պէտք Է Դադրի՛ն» վերնագրուած գրութիւնը, լոյս տեսած՝ «Նոր Օր»ի Օգոստոս 21-ի թիւին մէջ, կը խորհինք թէ կարելի չէ՛ այլ կերպ բնութագրել, եթէ ոչ՝ պարզապէս ենդակայական ֆանթեզի մը, յումպէտս հրապարակ նետուած...: Թերեւս աւելորդ պիտի չ՛ըլլար անոր բովանդակութիւնը այստեղ ամփոփելու փորձել մը ընել, հետևեալ երեք գլուխներու տակ.-

Ա. Գովերգութիւն.- ուր՝ լորձնաշուրթն կը փառաբանուին «ՀԲԸՄ-ի փառաւոր անցեալը, ողջունելի ներկան եւ աւելի քան խոստմնալից ապագան»: Այլ մանաւանդ «Էյճիպիեու»ի Նախագահ Պերճ Սեդրակեանը ու Ատենապետ Լուիվ Սիմոնը և մի շարք մեծահարուստ ջոջեր, որոնք «միայն ու միայն դրամ, միտք, ժամանակ և տաղանդ» տրամադրած ըլլալով՝ ներկայիս կոչուած են **անսխալական** մենատէրերը ըլլալու Պողոս Նուպարի մօտ մէկ դար առաջ հիմնած մեր մեծագոյն Միութեան:

Բ. Եղերերգութիւն.- Սէսիլ Բէշիշեան կը ջանայ ներկայացնել «Մելգոնեանի» «ամբողջական աւապախրումը», վկայակոչելով «Էյճիպիեու»ի սովորական հանկերգութիւնը, թէ՛ «Մելգոնեան»ը չի՛ ծառայեր այլևս իր նպատակին. թէ՛ անոր գոյութիւնը արդարացնող պայմանները այլևս չբացած են..., եւ այլ անհրեթթ պատճառաբանութիւններ՝ «Մ.Կ.Հաստատութեան անհրաժեշտ դարձած փակման որոշման համար»...: Ահաւասիկ «Մելգոնեան»ը վատթար եւ հիւանդագին, թէ՛ աշակերտական թիւով եւ թէ՛ ուսումնական մակարդակով՝ անդունդին եզրին հասած, ուրկէ ճար չ՛կայ փրկութեան..., բացի Կտակարարներուն «կամքէ անկախ պատճառներով առած որոշումը» վայն վերջնականապէս փակելու: Այ՛ն Կտակարարներուն, որոնց ուսերուն կը ծանրանայ պատասխանատուութիւնը իբրև TRUSTEE-ներ «Մելգոնեան»ը մատակարարելու և յանձանձելու ըստ Կտակին պայմաններուն:

Գ.- Հովվերգութիւն.- Եւ վերջապէս Սէսիլ Բէշիշեանի յորդորը ուղղուած բոլոր մելգոնեանցիներուն, մոլորած ոչխարները փարախ կանչող, ամայութեան մէջ փչուած հովիւի սրինգին ձայնին նման... «Եկէ՛ք մելգոնեանցիներ, վերադարցէ՛ք ձեր տունը, մեկտեղուեցէ՛ք ՀԲԸՄ-ի դրօշին տակ:» Ապա՛ աղաչական աչքերով սրտառուջ կոչ մը՝ «Դադրեցուցէ՛ք ցեխարձակումները».....:

Բնա՛լ նպատակ եւ տրամադրութիւն չունինք հոս անդրադառնալու վերոյիշեալ գրութեան մէջ տեղ գտած եւ «Մելգոնեան»ը պախարակող բոլորովին անհիմն կարծիքներուն, որոնք զուտ անձնական բնոյթ ունին եւ կը միտին պարզապէս «Մելգոնեան»ը վարկաբեկելու, կը վերաբերին թէական և վերացական հարցերու, խափուսիկ ծրագիրներու և խոստումներու, որոնք ապագային «պիտի գործադրուին 100 տոկոսով» անգամ մը որ «Մելգոնեան»ը փակուի, կալուածները ծախուին եւ միլիոնաւոր դոլարները անյայտանան «Էյճիպիեու»ի գանձանակին մէջ:

Դժբաղդաբար, կան նաև ոչ-մելգոնեանցի անհատներ ալ, որոնք Սէսիլ

Քէշիշեանի նման կը սիրեն գրիչ շարժել: Անոնք մամուլի էջերէն անգէտ եւ պարզամիտ գաւառական «տէրտէր»ի մտայնութեամբ տաղտկալի եւ անպէտք քարոզներ կը կարդան ուղղուած մելգոնեանցիներու լայն շրջանակներուն, առանց հարցին բուն էութեան իրազեկ ըլլալու, առանց անդրադառնալու թէ մելգոնեանցիներ ներկայիս պարզապէս կը տագնապին Մելգոնեան Բարերարներուն «Կտակին» ոտնայարումը տեսնելով: Անոնք կ'անգիտանան թէ մելգոնեանցիներուն համար աներեւակայելի է որ Պրն Պերճ Սեդրակեան եւ «Էյճիպիեու»ի Կեդր. Վարչութիւնը կրնան «Մելգոնեան»ի նման «հայակերտումի եւ մարդակերտումի դարբնոց» մը լուծարքի ենդարկելով ի սպառ վերցնել մէջտեղէն:

Սէսիլ Քէշիշեան մելգոնեանցի է: 1954-ի շրջանաւարտ: Ան առնուազն վեց տարի եղած է գիշերօթիկ ձրիավարժ սանուհի, «Մելգոնեան»ի ապահով եւ անապակ մթնոլորտին մէջ ստանալով բարձրորակ ուսում եւ հայեցի դաստիարակութիւն: Սէսիլ Քէշիշեանէն կ'ակընկալենք որ գէթ բարոյական պարտք վգայ իր երախտագիտական դոյզն վգացումները արտայայտելու Մելգոնեան անմահ Բարերարներուն հանդէպ, անոնց հիմնած եւ ազգին նուիրաբերած «Մելգոնեան» Հաստատութեան բարիքները լիովի վայելած ըլլալուն համար: Արդարեւ իր բռնած բացասական դիրքորոշումը «Մելգոնեան»ին հանդէպ՝ անհամատեղելի է մելգոնեանցիի իր հանգամանգին հետ, եւ նաեւ համապօր՝ ապերախտութեան.....:

Մենք, մելգոնեանցիներս, երախտաշատ «պաւակներն» ենք անմահ մեր Բարերարներուն եւ մեզի կ'իյնայ, ի գին ամէն զոհողութեան աշխատիլ որպէսզի Մելգոնեան Եղբայրներուն տեսլականը եւ մեզի փոխանցուած աւանդը պահուի՝, պահպանուի՝ եւ յարատեւէ՝ Կիպրոսի մէջ:

Մեր բոլորին միտքերուն մէջ պէտք է յստակ ըլլայ թէ «Մելգոնեան» Սանուց Միութիւններու ընդդիմութիւնը միայն ու միայն «Էյճիպիեու»ի Ղեկավարներուն ապօրինի որոշումին դէմ է, եւ այդ որոշումը արդէն ինքնին տարողունակ է առձակատում և պայքար հրահրելու: Այդ որոշումը բացայայտ յարուած մը կը նկատենք ուղղուած մեր ազգային շահերուն, արժէքներուն եւ ինքնութեան:

Սփիւռքահայ համայնքներ ամէնուրեք եւ նոյնինքն ՀԲԸՄ-ի երկփեղկուած մասնաձիւղեր վանապան երկիրներու մէջ բացարձակապէս կը մերժեն եւ կը դատապարտեն այս միակողմանի եւ անհեռատես որոշումը: Կիպրոսի կառավարութիւնը այդ քայլը «թշնամական արարք» կը նկատէ որովհետեւ կ'ընդունի թէ «Մելգոնեանը» ո՛չ միայն կիպրահայութեան՝ այլ ամբողջ Կիպրոսի ուսման ու մշակոյթի խորհրդանիշ է:

«Ի դէպ, Յունական շրջանակներում ընդվզումն անդարացիօրէն զուգակցում է նաև վարմանքով: «Այն, ինչ Թուրքը չկարողացաւ անել, դու՞ք եք հիմա ուզում անել» հարցնում են նրանք, ամօթի աներեւակայելի վգացումով պատելով մեզ՝ հայերիս:» կը գրէ «Սայբըրս Ուիքլի» շաբաթաթերթի երկարամեայ խմբագիր Ճորճ Տէր Բարթող, վերջերս, հայրենի «Ազգ» օրաթերթին մէջ:

Մեր յիշողութեան մէջ տակաւին թարմ են և բնաւ պիտի չ'մոռցուին

բուն փողոթի այն ցոյցերը որ տեղի ունեցան «Մելգոնեան» Հաստատութեան անձնակազմին, ուսանողութեան, ծնողներուն, ինչպէս նաև Հայ եւ Յոյն համայնքի անդամներուն մասնակցութեամբ: Նոյնպէս, ուսուցչական կազմին եւ պաշտօնէութեան յայտարարած միօրեայ գործադուլը, Մայիս 27-ին, որ աննախընթաց երեւոյթ է «Մելգոնեանի» տարեգրութեանց մէջ: Մամլոյ ասուլիսի մը ընթացքին ուսուցչական կազմին ներկայացուցիչները դատապարտեցին եւ մեղադրեցին Նիւ Եորքի «Էյճիպիեու»ի Կեդր. Վարչութեան այս անարգ որոշումը՝ որպէս «ոճրային արարք» հայեցի դատտարակութեան եւ Սփիւռքի Հայութեան դէմ գործուած:

Յաւալի է որ «Մելգոնեան» Սանուցներու ընդդիմութիւնը եւ դիրքորոշումը ոմանք սխալ կ'ընկալեն եւ թիւր կը մեկնաբանեն: Աւելորդ պիտի չ'ըլլար անգամ մը եւս կրկնել թէ մենք միշտ եղած ենք Բարեգործականին համակիր եւ Բարեգործականին բարի գործերուն եւ ծրագիրներուն ջատագով եւ պօրավիգ: Մեզմէ շատեր անգամ են եւ կը շարունակեն իրենց անդամակցութիւնը: Մենք պարզապէս դէմ են'ք եւ չեն'ք կրնար հաշտուիլ այն գաղափարին հետ, թէ՛ կարելի՞ է մօտ ութ տասնամեակներու փառաւոր վաստակ եւ աւանդոյթ ունեցող Սփիւռքի միակ գիշերօթիկ երկրորդական վարժարանը փակել եւ պատմութեան գիրկը նետել: «Մելգոնեան»ի նման «սրբանուէր, թանկագին» դպրոց մը կազմալուծելը՝ պարզապէս սրբապղծութիւն կը նկատենք: Ամէնայնդէպս, կը յուսանք եւ կը մաղթենք որ «Էյճիպիեու»ի Նախագահ Պրն Պերճ Սեդրակեան անսալով ամէն կողմէ բարձրացող բողոթի ճիշերուն, այլ մանաւանդ Կիպրոսի կառավարութեան, կիպրահայ համայնքին, պանապան երկիրներու ՀԲԸՄ-ի Մասնաձիւղերուն եւ մելգոնեանցիներուն կողմէ եղող ճնշումներուն՝ կ'անդրադառնայ «Մելգոնեան»ի նկատմամբ որդեգրուած ծուռ քաղաքականութեան եւ վերատեսութեան ենդարկելով կը սրբագրէ Մարտ 16-ին առնուած սխալ որոշումը եւ մենք կարիքը չենք ունենար դատական միջոցներու դիմելու:

Արդարեւ, ին'չ հակադրութիւն Մելգոնեան տեսլապաշտ Բարերարներուն եւ «Էյճիպիեու»ի ներկայ նիւթապաշտ ղեկավարութեան միջեւ....: Մինչ Մելգոնեան Եղբայրներու մեծութիւնը կը յատկանշուի անով, որ անոնք բացառիկ յայտնատեսութեամբ իրենց ամբողջ հարստութիւնը ազգին նուիրաբերելով որոշեցին «նիւթական»ը վերածել աննիւթական «Լոյսի Աղբիւր»ի, ահա՛ մօտ ութ տասնամեակ յետոյ «Էյճիպիեու»ի ներկայ Ղեկավարները կ'որոշեն այդ աննիւթական «Լոյսի Աղբիւր»ը փակել, ծախել եւ այդ ձեւով վայն ետ՝ նիւթի եւ նիւթականի վերածել....:

Վերջացնելու համար, ահաւասիկ «Մելգոնեան» Հաստատութեան քայլերգին վերջին քառեակը: Բոլոր մելգոնեանցիներուն համար հիմա այլեւս ժամանակն է վայն համարձակաձայն եւ միաբերան երգելու.

*«Երախտապարտ պաւակներդ ենք հարապատ,
Կուռ շարքերով պիտ' պայքարինք անվրհատ,*

*Եւ թոյլ չ'տանք որ «վճիռներ» անօրէն,
«Անմահ Լուսոյ» Սուրբ Տաճարն այս քայքայեն...:»*

ԿԱՐՕ ԳԱՍԱՊԵԱՆ
(1954-ի շրջանաւարտ)

Օգոստոս, 2004. Նորթրիճ, Կալիֆորնիա.

www.melkonianforever.org